



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2008 թվականի N 1207-Ն

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*

1. Հաստատել Կայուն զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի.
2. Հայաստանի Հանրապետության նախարարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին՝ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել առաջարկություններ Կայուն զարգացման ծրագրի՝ իրենց իրավասություններին վերաբերող՝ 2009-2012 թվականների քաղաքականությունների իրականացումն ապահովող միջոցառումների վերաբերյալ.
3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝
 - 1) մինչև 2008 թվականի նոյեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության նախարարություններ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմիններ ներկայացնել Կայուն զարգացման ծրագրի՝ 2009-2012 թվականների քաղաքականությունների իրականացումն ապահովող միջոցառումները ներկայացնելու օրինակելի ձևը.
 - 2) մինչև 2009 թվականի հունվարի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Կայուն զարգացման ծրագրի իրականացումն ապահովող՝ 2009-2012 թվականների միջոցառումների նախագիծը.
 - 3) մինչև 2008 թվականի դեկտեմբերի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Կայուն զարգացման ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգը և Կայուն զարգացման ծրագրի մոնիթորինգի համակարգի զարգացման միջոցառումների ծրագիրը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից.

Հայաստանի Հանրապետության վարչապետ
Տ. Սարգսյան